ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՅԻՈՍ ԳՐԱԿՔՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՎԻՆԿԵՆՏԻ ՄՈՆՏԵԱՅ

(ՏԵՍ ՀԱՏՈՐ ԽԶ. ԷՋ ՃԿԴ)

ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿՈՌՆԵԼԻԱ ԵՒ ԿԱՅԻՈՍ

Կոռնելիա

ՏԱՑԵՆ, որդեակ, երկինք, մի՛ սորրջանալ քեզ երբեք
Ընդ անչափդ այդ լաւութիւն. եթէ վեհանձըն խորհուրդ-
Ցուցայցես յՕպիմիոս գտանել՝ 'ի գո՛ւր յուսայցես.
Բըռնաւոր է նա համակ, և զոր խիթամն առաւել՝
Բըռնաւոր ամբոխապարտ, ծանրաբեռնեալ երախտեօք.
Սիրտն այն անագորոյն ոչ ունիցի բնաւ ներել
Ամբոխոյ՝ պարգև ըղկեանս իւր առ 'ի քէն գտելոյ.

Կայիոս

Ներեսցէ մի՛. ոչ այնու զիղջ ընդ պարգևս իմ կալայց.
Սիգութեան կամ լաւութեան գրեալիր՝ խընդամ մանաւանդ
Ընդ կորանս առաւել քան 'դ կործանումն Օպիմեայ.
Իսկ արեան թէ ամպարիշտ այսօր հեղուլ էր 'ի ճահ,
Ջայլ ուրուք արժանի դու քան զնորայն գտես քաջ.

Կոռնելիա

Անողորմըն դու, զցաւոց և դառնութեան յուշ ածես,
Որ 'ի ժահր ինձ թունէ զյաղթանակիդ հեշտութիւն.
Այլ զի դու ինքնին, որդեակ, բուռն ըղձիրացն հարեր նախ,

digitised by A.R.A.R.@

Լո՛ւր զդըժնէ կասկածանս՝ որ զիս 'ի դող արկանէ։ —
Գիտասջի՛ր՝ զաղտագողի զբըդեաշխըն խուն ինչ յառաջ
Իւրովի յայց աներոյջդ եկեալ անշունչ դիականն.
Ո՛հ, ոչ, ոչ 'ի հանդէս բարեպաշտօն ինչ զըթոյ,
Այլ ոգի չարասիրտ է կարապետ գալըստեանն.
Զըգիտեմ զո՛ր ինչ հնարք նիւթին, այլ յայտ ըստուգիւ
Նենգաւոր ինչ դաւ յղենայ, և թէ նա ինքըն բըդեա՛շխն...
Ո՛հ, զի՞նչ է զոր հայիմս. զինո՞ւք Ատեանն ամրափակ։

Կայիոս

Տե՛ Նա Սիկարեան վաշտու. է գունդ կրետացւոց։

Կոռնելիա

Երկի՛նք. կրետացւո՛ց ջոկատուն զօրք. և առ ինչ.
Քաւ, ոչ երբեք 'ի Հռովմ գան 'ի հանդէս ելանել
Զէնք հանգունատիպ՝ սուսկ յարհաւրաց ու արենէ։
Որդեակ իմ, քեզ 'ի դաւ տէգքն այն շողան. սիրտ իմ գնայ։

Կայիոս

Եւ ցա՛յդ վայր ուրեմն խարդաւանի վատն 'ի նենգ։

Կոռնելիա

Եւ զի՞նչ այլ յուսայցես 'ի բըռնաւոր նենգողէ...
Այլ ո՞ր ինչ շահ օգտի զհերըս փետտել, մոլեգնել...
Խորհըրդոց են աստանօր պէտք, ո՛վ որդեակ, քաւ ցասմուն,
Ե՛րթ, խըմբեա դու զժողովուրդն յատեան. յայտնեա զանձըն քո.
Խօսեաց, որոտա բանիւք շըրթանցդ 'ի շանթիս,
Զոր 'ի դէպ ժամու գիտես կայծակնացայտս արձակել.
Հա՛ր, շանթեա, կործ զնենգողըն դաւաճան քում անձինդ։
Արդարոյն նիւթէ վնաս՝ որ զչարագործն արձակէ.
Եւ գիտա զվրէժ երախտեաց՝ հասարակաց երախտիս։
Ե՛րթ, մի՛ ևս երկմըտել, հարջիր զնենգողն 'ի կորանս.
Գըթութեան քոյին զվընաս ուղղեա, և դարձ վրիժառու,
Կամ բնաւ մի՛ ևս դառնայցես։

Կայիոս

Մայր իմ, քաջիկ տեսանեմ.
Շուրջ պատեալ կամ 'ի դաւոյ, հնաւանդ զինուց պատըրկաց.
Այլ խոյս 'ի հարուածոց նոցին տալ չիք այլ ինչ հնար,
Բայց արեամբ քաղաքացւոյ. և չեմ արեան ծարաւի,
Գիտես քաջ։

digitised by A.R.A.R.@

Կոռնելիա

Ապաժոյժք չարաւ արեան 'ղ երակունս
Լիազեղ յորդեն Հռովմայ. հեղո՛ւլ փըրկանք են նըմին:

Կայիոս

Հեղցէ զայն տապար. քա՛ւ, մի՛ երբեք աջ որդւոյդ:
Անօրէն չարագործաց իսկ ըսրբազան է արիւն,
Զոր ոչ պղծում հեղուլ օրէն՝ բայց սրոյ իրաւանց:

Կոռնելիա

Եւ զի՞նչ, եղկելիդ դու, զիրաւանց բարբառիս,
Ուր ձայն լոկ մեծեղեռն անօրինաց են օրէնք,
Ուր յոսկի ու 'ի ծիրանիս պըճնեալ յանցանք շողշողեն,
Ուր մուրող կան լաւութիւնք, եղեռն է սէր հայրենեաց,
Ուր մահու խուժադուժ անկաւ քոյինդ հարազատ,
Խոց և վիրաւոր, յումէ՞ արդեօք, յօրինա՞ց:
Ո՛հ, որդեակ իմ փարելի, և իրաւա՛նց դու մնայցես.
Զօրէնս աստուածային զյաւիտենից ևեթ լո՛ւր,
Զոր հընչեն արարածք ողջոյն. Հզօրին՝ զօրագոյն:
Իրաւանց աստանօր բըթեալ են սայրք սուսերի,
Կամ զանզօրն հարուածեն լոկ, բըռնագունին դաշնակից:

Կայիոս

Մայր իմ, թէ խրախոյս յարիւնարբուի տաս 'ի գործ,
Թըշնամանս ինձ դնես. զի ոչ ծնայ ես երկնել զեղեռունս,
Եւ ոչ այս էին հանդէսք՝ առ որըս զիս մարզէիր:

Կոռնելիա

Եւ ո՛ ոք եղերանց արդ թելադիր քեզ կայցէ.
Վառել զանձն, յառնել, 'ի մահ տալ զհայրենեաց բըռնաւոր՝
Պարտք են ըսրբանուէր. ո՜ն, երկիցես ինչ աղէ
Ի վատ կաշառակուրծ նոցին դողդոջ տապարաց.
Մի՛, իցէ՞ թէ երկիւղ ինչ արկանէ մահ 'ի քեզ:

Կայիոս

Կին դու...

Կոռնելիա

Ե՛հ, զի՞նչ ասացի. մեղայ, որդեակ. ներեսջիր.
Մայրենի սէր, բարկութիւն, երկիւղ և գութ խանդակաթ,
Տան շըրթանց իմոց ասել՝ զոր դատապարտ առնեն միտք:
Այլ զանշուշտըն դիտելով ըզմեօք կորուստ վերահաս,

digitised by A.R.A.R.@

Ի բարձումըն բնաջինջ ազատութեանս անձկալւոյ,
Այլ շուրջ դաւաննեալ զքեւ որոգայթք, մատնութիւնք,
Ինքնին և զլաւութիւնսդ զի կորուստ քեզ նիւթեն,
Տեսեալ զարիւնահոտ և զհանդերձանըս մահուդ
Եւ մահու անարգանաց… ո՜հ, մի՛, որդեակ իմ, զհնարից,
Այլ խորհեաց 'ի դարման վտանգի կենացդ և զպատւոյդ։

Կայիոս

Ընդ պատիւ իմ՝ անկասկած լիջիր… գիտեմ զինչ առնել…
Կենդանի կամ թէ մեռեալ՝ ընդ հուպ լիցիս հաւաստի
Զի չեմ ինչ անարժան քեզ…

Կոռնելիա

Եւ 'ի խռան թշնամեաց
Տա՛լ զանձնըդ գնայցես՝ մերկ կողոպուտ 'ի զինուց։

Կայիոս

Ի լանջս իմ տանիմ զանմեղութեան զէնք. շատ են։

Կոռնելիա

Ի դաշոյնըս վատորեար աւազանւոյն ընթանաս,
Եւ չա՛տ լոկ զանմեղութեան հաւատայցես ըզվահան։

Կայիոս

Ասացի քեզ, չըկամիմ քաղաքայնոց ես զարիւն։

Կոռնելիա

Ապա զմահ քոյին կամիս։

Կայիոս

Անուն ամբիծ ես կամիմ.
Բարեդէպ կամ թէ դըժնեայ լիցի բախտին յիս հանդէս,
Քա՛ւ, մի՛ զիս յինէն օտարախորթ դիցէ բնաւ։
— Այլ լո՛ւր դու. զկեանս 'ի վտանգ մեծ արկանել ընթանամ[1],
Զի հարսին եղկելւոյ գուշակ որ լեալ զայնմանէ,
Եւ փութամ ճեպիմ մեկնել՝ զուրկ յողջունէն հրաժեշտի։
Մա՛յր իմ, յաջ քոյին երդուեալ, զոր յողջագոյրս համբուրեմ
Ըզվերջինս, ո՜հ, գուցէ զայս, զի չիք ինձ հնար կալ ժուժել
Ի տեսիլ արտասուաթոր մօրն և որդւոյս վըշտահար.
Մըխիթար նոցին ընդ իմ լեր դու, կացջիր ապաւէն
Եղկելեացն երկոցունց, եթէ՝ նկճեալ ես անկանիմ.
Յուսով այս խիզախել առից 'ի վտանգս աներկիւղ,
Եւ ինձ քաղցր 'ի ժամանել մահուս՝ լիցի մեռանել։

1) Ի հանդէս գայ Լիկինիա 'ի խորս անդ Թատերին։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԼԻԿԻՆԻԱ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

Լիկինիա

Մեռանե՜լ քեզ, ով անգութ. և ո՞չ 'ի յուշ արկանես
Զի կախեալ կան զքէն և կեանք այլոց. և այժմ իսկ կենաց,
Զոր յուսամ ըմբոշխնել առնուս՝ իցես ինչ դու տէր.
Ո՛հ, չիցե՞ն քեզ, չունիցի՞ս տղէ և հարսն և որդի,
Ոյց ընդ քեզ՝ թէ մեռանիս դու՝ մեռանել հասանէ։

Կայիոս

Եւ դու, Լիկինիա, գաս կեղեքել ըզսիրտ իմ։

Լիկինիա

Գամ 'ի յուշ քեզ արկանել՝ զի ամուսին ես և հայր,
Զի խուժդուժ և ապիրատ գործես՝ թողուլ ըզնոսին։
Զի ոչ 'ի պատերազմ դիմես՝ ուր փառք հաւաքին,
Ուր ինձ սէգ և շըքաղիր սուգ՝ մահ քոյին ծնանիցի.
Զի գէթ յայնժամ զարտասուս այրւոյս 'ի քաղցր իմն անոյշ
Մեղմէին 'ի գիւր սըրտիս՝ վէպք յաղթութեանցդ 'ի մարտի,
փառաւոր ըսպիք վիրացդ և պերճ մըրցանքդ արութեանց։
Այլ, աւա՜ղ, արկանել զանձնըդ 'ի վտանգ. գնաս այժմիկ
Ուր անշուշտ նըշաւակք նախատանաց քեզ մընան,
Ուր ոչ ինչ շահ օգտի հասցէ մահուամբդ հայրենեաց.
Զի վաղ իսկ յաղթանակ կանգնեալ է ժանտ որերոյն,
Բռնութիւն ընդ բնաւս և սուր վարեն ըզդատ իրաւանց։
Երախտեաքըդ քեզ 'ի գինս խարդաւանեաց թըշնամին,
Ամօթալից վըճռաւ կարգեալ է նա Հռովմայ դատաւոր,
Եւ զէնքըն շուրջ աստէն պատեալք՝ նըշանք են մահու։
Անիրաւ բարեկամք՝ եղծին զարդար իրաւունդ,
Իսկ սակաւքըն վատասիրտք, թէպէտ և ոչ ապիրատք,
Այլ անդէն զդողանի հարեալք՝ ցանեալ ցըրուեցան։
Միայն ես և անզէն, առիթ քինու պատըրկաց.
Եւ յաղէտս յայսքանի զի՞նչ զօրավիգն եղկելւոյդ։

Կայիոս

Արութիւնս իմ, իրաւունք ինքնին և դասք ամբոխին։

Լիկինիա

Եւ յո՞վ, անըզգոյշ դու, ապաստան անկանիս,
Ի՞մ իմիք զակընկալեացդ հաւատայցես ըզվախճան։

digitised by A.R.A.R.@

Զարաբաստ դիւրեղծական ուժիլն է սէր գորովոյ,
Այլ 'ի փորձ իսկ դառնաղէտ մատեաւ քոյինդ հարազատ։
Ո՛հ, շըրջեաց 'ի խորհըրդոց այտի. փըրկեա զանձըն քո,
Լե՛ր 'ի գիրկս առաջնին թերափիմայցդ յակատան.
Ի վահան ես ինքնին եդից ըզլանջս իմ զայս քեզ,
Զիս զիս նախ Ոպիմեայ կոտորեսցեն զէնք անգութ.
Ե՛կ աղէ, լո՛ւր, ա՜հ, տեղի տո՛ւր, թագիցիր և ծածկեա՛ց.
Ցարտասուս վըշտաց իմոց, հարսանեկանս 'ի մեր զօդ,
Ի սիրոյս իմ գրաւականս համայն՝ զոր ցարդ ցուցի քեզ,
Ցորդիդ քո, յեղկելիս այս քո մանկիկ աղերսեմ,
Ո՛հ, գութ 'ի քեզ արկցէ չիջելափառ տուն քոյին,
Ի խորս իջցէ սըրտիդ աղերսալիր ձայն բնութեան։

Կայիոս

Ո՛հ, հանդարտ լե՛ր, Լիկինիա, և մի՛ զփառաց համբաւոյս
Կամիցիս շիջուցանել այսօր զպայծառ լոյս աստեղ.
Եւ մի՛ կեղտ ոք վատութեան դիցէ զինև յամս յապայս։
Ի վտանգի կայ Հռովմ. լըսեմ զնովիմբ ըզձայն շըղթայից,
Լըսեմ զաղերսալիր նորին զբարբառ շնորհահայց,
Լըսեմ՝ զի գերագոյն ըզնա քան զհարսն և զորդիս,
Քան ըզկեանս իսկ զըլխովին դընել օրէնք են և պարտք.
Եւ կացցե՛ս ես, մընասցե՛ս աստ դողանի թաքթաքուր,
Ե՞ս Գրակքոս, Ե՞ս այսքանուց մօր ծնունդ, փեսայ Կրասսոսի,
Ե՞ս Հռովմայեցիս. քա՛ւ, մի՛ դու, հարսն իմ, թոյլ տուր,
Թոյլ տուր ինձ հաւատարիմ պարտուցս ըզհետ ընթանալ,
Հաճեաց՝ զի մեկնեցայց 'ի քէն անդորր և խաղաղ,
Ի հրաւէր ձայն հայրենեաց հնազանդ եղէց. ողջամբ կաց։

Լիկինիա

Մի՛, կացջի՛ր։

Կայիոս

Թոյլ տուր ինձ։

Լիկինիա

Ո՛հ, ոչ, անգութ։

Կայիոս

Թոյլ տուր ինձ։

Լիկինիա

Կամ կացջիր, անագորոյն դու, կամ սպանջիր զիս աստէն.
Մի՛ աստ և անդր անցցես, մի՛, չև կոխեալ ընդ. ամուր,
Զիրանն իմ տարածեալ այսրէն 'ի խոչ ընթացիցդ։

digitised by A.R.A.R.@

Կայիոս

Ո՛վ հայր իմ...

Լիկինիա

Յաղթեցի ես, գըթասիրտ անմահ դիք.
Ի գութ խանդաղատեալ անշարժ 'ի հօրն անդր յարձան
Յառեալ պըշնու լըռիկ, և արտասուք յայտս իւրում
Սահին սողոսկին 'ի վայր. այո՛, այն արտօսր
Ինձ գուշակ կան հուսկ ուրեմն յուզմանց սըրտին գորովոյ:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻ, ԿՈՌՆԵԼԻԱ, ԿԱՅԻՈՍ ԵՒ ԼԻԿԻՆԻԱ

Առաջին քաղաքացի

Ո՛վ Կայէ, մեծամեծ աղէտք 'ի գլուխ են հասեալ.
Ծըրջապատ 'ի զինուց Աւենտինեանըն կայ բլուր.
Եւ քարոզ չարագոյժ 'ի խուռն անդ հոծ ամբոխին
Բըռնամահ լեալ բարձրագոչ զԸմիլիանոս հըռչակէ.
Ըսպանող Նըմին զքեզ ինքն և զՍեմպրոնիա զքոյր քոյին
Եւ զՓուլուիոս համբաւեալ. զոր պընդագոյն եւս Դրուսոս
Հաւաստել առնու զքարոզն. և ամենայն իսկ ուրեք
Ցեղյեղեալ զլուր համբաւոյն ցանեն չըրթունք թըշնամիք.
Ամբոխին շըշընջեալ զայն առ իրեարս յունկանէ,
Հըծծէ թաքնաբար, այլ և հաւատս ընծայէ...

Կայիոս

Եւ հաւատս իսկ ընծայէ...

Առաջին քաղաքացի

Ոչ լոկ. երդնու եւս 'ի վրէժ
Անկելոյն խողխողելոյ. ես որ յանմեղ զքեզ ունիմ...

Կայիոս

Ժողովուրդն ըսպանչի զինէն հաւատս ընծայէ [1]...

Լիկինիա

Ա՛խ կացջիր, ա՛խ լո՛ւր, լո՛ւր, ո՛վ անգութ դու, կացջիր...

Կոռնելիա

Յո՞ զիմեալ գնայցես, գուսար իմ:

1) Դիմէ Թափով 'ի դուրս այլ յայլմէ եղեալ:

digitised by A.R.A.R.@

Լիկինիա

Թոյլ տուր ինձ, մայր, թոյլ արա։

Կոռնելիա

Ոչ. 'ի զուր ճըգնիս։

Լիկինիա

Անգութ մայր... ինձ եղուկ... ոչ ես այլ
Ոչ ես այլ տեսից ըզնա... ոչ ես...

Առաչին քաղաքացի

Անմեղ է Գրակքոս. քաջ գործեցի։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ԿՈՌՆԵԼԻՈ ԵՒ ԼԻԿԻՆԻԱ

Կոռնելիա

Ո՛հ, դարձ այսրէն 'ի միտսրդ արասֆիր, ով դուստր իմ,
Եւ մի 'նդ ցաւոք ընկճեալ՝ 'ի զուր քեզ վիշտս ըստեղծուլ.
Սիրեցես զորդեակն իմ՝ քաջ քան զոր ես ինքըն սիրեմ.
Այլ անխռով համայն հայիս զիս, թէպէտ մայր ես իցեմ։

Լիկինիա

...Ոչ ես այլ տեսից ես զինքն, ո՛հ...

Կոռնելիա

Քաջասիրտ առաւել,
Առաւել յոյժ արտասուս հռովմէական արութեան
Ակն՝ ունէի ես 'ի հարանէդ Կոռնելիայ։

Լիկինիա

Նա յանչուշան ընթանայ մահ, և զլալ յանցանս ինձ գրիցես։

Կոռնելիա

Ընթանայ՝ ուր պատուոյ վնա կոչէ ձայն սըրբանուէր։

Լիկինիա

Այլ յորժամ թաթաւուչ արեամբ և խոց վիրալից
Ցոչ 'ի յոչ գետնաքարշ զինքն յանդիման քեզ տեսցես,
Ջինչ ինչ յայնժամ գործեսցես։

Կոռնելիա

Զոր ինչ յաւուրն յայն ցուցի՝
Ցոր եղբայր նորին անկաւ։ Գոհ՝ ըզփառաց նորին չուք,
Ի վիճակ ժառանգութեան կալայց. զանուն իւր յաղինս
Պարագայց արդար դարուք քաղցր 'ի պարծանս համբաւոյ՝

digitised by A.R.A.R.@

Ինձ յորդի դրեցից։ Օրէն քեզ զարութիւնս իմ կալցիր,
Եւ լեր յանդորրու։

Լիկինիա

Ե՞ս յանդորրու. լոկ 'ի մահու
Հանդիպել անդորրութեան յուսամ. երդուեալ քեզ ահա
Չի ոչ սոսկ զորդւոյդ միակ ըզխարոյկ ձեռք քո լուցցեն։ (Ելանէ)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՈՌՆԵԼԻԱ ԱՌԱՆՁԻՆՆ

Ցեսա՛ուրեք երբեք թերշուտ քան զայս ընտանիս,
Դամ սիրտ կեղեքեալ քան զիմն անլուր դառնութեամբք։
Դուստր Ավրիկանու Մեծին և մայր ես Գրակքեանց,
Ի հրաչակ պարծանաց հարեալ անուամբքս այսոքիւք,
Խընդրեալ հրաւիրանաք յարբայազօդ հարսանիս,
Եղուկ ինձ, զարդիս յայնքան փառաց պերճաշուք
Ցոսկ տրխուր ևեթ շողիւն ինձ Ինան անբախտ արկածից։
Երկուս երկնեցի Հռովմայ որդիս պանծալիս,
Ջերկոսին ևս Հռովմ, տաղտուկ զաղատութիւն իւր եղեալ,
Եբարձ 'ի կենաց. և յոյր ձեռն արկ յարևէ...
Ա՛խ, մեծանձըն զաւակաց եղեռն է մայր գլուտանել.
Ցայսմհետէ ապիրատիցն ևեթ պարծանքս տարցին.
Այլ հանգոյն դրբուատիս ընկալցին ծնողք Ոպիմեայ.
Քաղցր ինձ մանաւանդ ունել որդիս վիրալից
Խոց և 'ի սպանդ վարեալ, բայց մի՛ վատանուն։
Այլ աղէ զհետ եղկելոյն ելից... Ե՛հ, զինչ այդ ամբոխ...
Դագաղքդ այդ մահագոյժ, զոր վերամբարձ յուսս իւրեանց
Ծերակոյտ անդամոց տանի որեար սրգագրած...
Ո՛վ տեսիլ, որ սարսուռ ընդ երակունս արկանէ...
Ինքն ահա, Եմիլիանու դագաղքն... ո՛հ, սիրտ իմ դողայ...
Հազիւ խոյս յերեսացն առնուլ ինձ ուրք իմ զօրեն...
Ո՛վ դուստր, ով ամպարիշտ դուստր, աւա՛ղ, զինչ գործեցեր։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՊԻՄԻՈՍ, ԱՆԴԱՄՔ ԾԵՐԱԿՈՒՏԻՆ, բարձեալ բերելով զդագաղն Եմիլիանու, ՆՈՒԻՐԱԿՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Ոպիմիոս

Ամենեսեան հանգուցէք ըզմահահոտ զայդ ըզբեռն։—
Ժողովուրդ, բարեկամք, և ծերակոյտ վեհորեար,

digitised by A.R.A.R.@

Ըղձուսկն աստ հարկանել առցուք պարտիս թախծութեան
Առ ընտիրն 'ի մարդկանէ՝ զհասարակացըն գըթոյ։
Քաւ, արժան ինչ բնաւ ողբոց քան զայս չեկաց կամ կացցէ,
Հայր ձեր, կուիրինեանք, պայծառութիւն տէրութեանս
Եւ համայն իսկ աշխարհի՝ կա՛ն 'ի դադարո՛ղ յայդ անշունչ։
Ո՜վ, քանի՛ արութիւն մեծ, ճոխութիւն գերափառ
Բարձեալ պակասեցին այսօր Հռովմայ պետութեանս.
Ո՜հ, որքան մեզ դըժնեայ յեղերականս յայս համբաւ,
Խընդայցեն ասիական ազգք և ազինք Ափրիկայ.
Անյաղթն այն բազուկ՝ որ դող յոգիսն արկանէր՝
Անկեալ դնի անշարժ. և 'ի նանիր աստանօր
Արտասուք և ձայնք ողբոց մեր զինքն 'ի կեանըս կոչեն։
— Աղէ՜ ո՞ւր իցէ կուինտոս... Տեսի ես զինքն առ ինև
Վայրիկ մի յառաջ... Ո՜հ, ո՞ւստ գտանիս դու կուինտէ.
Միշտ յականջս իմ հընչէ վըսեմախոհդ այն վըճիռ,
«Հարկ էր, ասայեր, ուր գտանէր այր այսքանի,
Հարկ՝ լինել ես անդանօր համաշխարհի պետութեան »։
Այո՛, շնորհք առ Դիս՝ զի այսր առ մեզ ծնանել զինքն ետուն,
Այլ և զղջ ընդ այն՝ զի վաղ յափըշտակեալ առ 'ի մէնջ,
Անարժանս ըզմեզ նըմին 'ի վայելումըն վարկան։
— Լելիէ, և դո՛ւ իսկ այսր իցես, չըքնաղդ օրինակ
Մըտերիմ բարեկամի. մորմոք՝ զարտօսրըդ ունի,
Ցապուշ հարեալ, լըռիկ՝ ցաւոցդ 'ի ծոց խորասոյզ,
Ի մահուդ սեաւ անկողին կառուցեալ զակնըդ պըշնուս.
Ո՜հ, զի՞նչ, եղկելիդ դու, խընդրիցես անդանօր,
Ըզքո՞յդ զՍկիպիոն, ըզմըտերի՛մ քո սերտիւ...
Ն'աւանիկ պատառեալ'ի տըխրաթոյր քօղ մահու,
Զիրկ թափուր 'ի կենաց շընչոյ, յաւէժ լուռ, յաւէժ։
Ո՜հ, ոչ ես ըզնորին լուիցես ըզվեհ բանս ըզգօն,
Զհայրենեաց շընչելով սէր, զեզուն երկնից գիտութեամբ.
Ոչ ես ա՛յլ զինքն 'ի մարտի՝ կայծակնացայտ առ ոսոխս
Ու 'ի պարզել անդ ռազմախումբ դըրօշմանց՝ զըւարթ լըրջադէմ,
Առ պարտեալըն տեսցես կարկառեալ զաջ գըթութեան,
Արտասուել զարտասուս նոցին և կալ մըխիթար.
Մ'ահացուի 'նդ կերպարանօք, այլ յանդորրու և 'ի մարտս
Ըզվեհ զաստուածական սըրտի զհանդէս ցուցանել։
Որդի գորովասէր, առատագութ հարազատ,
Բարեկամ փարելի, ազատական և համբոյր,
Ժուժկալ, խոնարհամիտ, քաղաքացի պերընտիր,
Զարութիւնս հռովմէականս համայն գանձէր 'ի սըրտին.
Սոյն սա ինքն ահա դիւցազնըն զոր անդարձ կորուսաք։

digitised by A.R.A.R.@

Եւ որո՜վ եղանակաւ։ — Ո՛հ, չըկամիմ, կուիրինեանք,
Զառնում յանձըն զարտասուսդ յեղուլ 'ի բոց բարկութեան։
Դառն է ինձ գուժել առ ձեզ զեղեռն աՀաւոր...
Ո՛հ, մի՛, մի՛ գիտասջիք երբեք զի զձեզ սպանութիւն
Որբացոյց 'ի Հօրէ։

Առաջին քաղաքացի

Խօսեա՛ց, գիտել զայն կամիմք։

Ոպիմիոս

Քա՛ւ, մի՛, Հռովմայեցիք. լուռ ինձ արժան է լինել,
Ո՛հ, մի՛ բուռն ինձ առնէք արդ զըսպանողն անուանել։

Երրորդ քաղաքացի

Օ՛ն, զանուանս ըսպանողացն, Հապ՛ օն զանուանըս նոցին։

Ոպիմիոս

Ե՛հ, զիջեալ ցածերուք, եղբարք, 'ի մեծ զայրութիդ.
Առ իմէ զըսպանողացն առ ձեզ զանուանսն առակել,
Զի մեծի եղերանն ընծայութեանց լեալ գիտակ։

Երկրորդ քաղաքացի

Քա՛ջ իսկ, կամք ընծայութեանցն 'ի լուր, խընդրեմք զՀաւատիս։

Ոպիմիոս

Խընդրեցէք զայն. օ՛ն 'ի վեր առեալ բացից ես ուրեմն
Ըզքօղըն սըգապատ՝ ծածկոյթ վըսեմ ճակատուն։
Մերձ առ իս մատիք, կացէք աղէ զինն. տեսէք օ՛ն[1]։

Ժողովուրդն

Ո՛վ տեսիլ քըստմնելի[2]։

Ոպիմիոս

Ցորդ ընդ երեսըն զեղեալ
Պատարուն արեամբ զերակըն դիտեսջիք զճակատոյն։ —
Է և իմ տեսեալ երբեք... լուարուք ուշիւ ըզբանս իմ,
Տեսի և ես երբեմն ըզմեռելոց դիակունս,
Դեռ այն ինչ բարձի թողի լըքեալս 'ի կենաց.
Այլ տըգոյնս և 'ի դալուկն Հարեալ, ծիւրեալ Հալեւմաշ։
Ի տագնապս օրՀասական՝ բնութեան 'ի ճիգն ընդ մաՀու,
Առ մեծի վտանգին՝ արիւն՝ ոգւոյ կենաց պաՀպանիչ,
Ի սիրտ անդր ամփոփեալ իջանէ՝ կալ 'ի թիկունս.

[1]) Մերկանայ գլխակնն։ — [2]) ԶարՀուրանք յետս յետս ընկըրկեալ։

digitised by A.R.A.R.@

Եւ մինչ սառըն դեռ մահու աղխէ զդըրունըս սըրտի՝
Անդ ըզկայ առեալ հանգչի, և ոչ այլ դարձ ևս առնէ
Զայտիցըն՚ վարդատիպ գունաւորել զշնորհաց դեղ։
Այլ աստ ո՞չ տեսանիցէք ողջ բովանդակ զեղկելոյն
Ոռոգեալ արեամբ ըզդէմըն թըխաթոյր և զեղուն.
Տեսանէք և զկապուտակ ճըմլեալ զորկոյն 'ի բազկաց՝
Որ խեղդ արկ ըզնովիմբ՝ ճընշեալ ուժգին բըռնութեամբ.
Ըզբիբսըն դիտեսջիք ցըռկեալ ցըցուեալս առ 'ի չեղ,
Եւ զոգցես իմն 'ի դուրս վազեալ 'ի բնիկ շըրջանէն.
Հայեսջիք ընդարձակեալ լայնեալ ռընգանցն և ըզփողս,
Նըշանակ 'ի տուրեւառ շընչոյ՝ ճըգանց բըռնադատ.
Ըզբազուկսն 'ի ձիգ արձակ արձակ տեսէք տարածուն,
Եւ զմատունըս զայսոսիկ համայն պարզեալ տարանջատ.
Որպէս ոք՝ զի 'նդ պարանոցն իւր անկեալ խեղդ բըռնութեան
Այր և անդըր չարժիցի՝ չև 'ի շընչոյն ոգեսպառ.
— Եւ յետ այսր ամենայնի հաւատարիմ դեռ կայցուք,
Ի բաց յանդգամոց աստի՝ բաշխից իրաւամբք
Մեկնեալ՝ քաղցըր նոցին կենաց զոգի պարարիչ.
Քաւ, 'ի բաց տար, արդարոյն ոգի փաստք այսգունակ
Երբեք ոչ զերկրաւորն իւր լըքանէ զարգելանս.
Զի ոչ իմն ոսոխի հանգոյն յաւեր յամայի
Ըզհետս ապականիչ մոլեգնութեանըն դրոշմեալ
Խոյս 'ի բաց տըւեալ փախչի, այլ հանդարտիւ և մեղմիկ
Մեկնեալ հեռանայ՝ զերծ յարգելից մահացուին.
Զերդ համբոյր բարեկամ՝ առ մըտերիմ վըշտակից
Դըժընդակ ուղւոյն 'ի ծայր՝ պաշտէ զողջոյն հրաժեշտի.
— Աղէ ո՞չ հանգոյն իմումս, Հռովմայեցիք, և ձերդ աչք
Ակն յայտնի 'նշմարիցեն պայծառ ըզհետս եղերանն.

Առաջին քաղաքացի

Քաջայայտ և ակներև. հապ՝ ո՛ն 'ի վրէժ կամք համայն.

Ժողովուրդն

Ի վրէժ, ո՛ն, 'ի վրէժ.

Ոպիմիոս

Դո՛ւք վրիժառու Նըմին, դո՛ւք.
Եւ իցէ թէ 'ի գիտել անդ զոճրագործն առջիք վրէժ.
Եւ զանուանսն իսկ ոչ համբուն ապիրատիցն ասացի.

Երրորդ քաղաքացի

Ասասջիր, ո՛ն, ցոյց թէ ոյք իցեն զնոսին, և տեսցես.

digitised by A.R.A.R.@

Ոպիմիոս

Այլ ո՛չ մեղք իւրեանց ինքնին յայտնի գուշակ կան նոցա.
Եւ ո՛ւմ այլ ումեք հնար՝ ըղնոյն յաւարտ վըճարել։
Ո՛վ որ եղկելույն գաղտագողի մուտ գործեալ՝
Ի սենեակ անդր հասանել, և լի վըստահ համարձակ
Ի ըլուին անդորրութեան անդ՝ իւրայնոցն 'ի միջի՝
կենաց նորին գաւել, բայց թէ բազուկ ընտանի
Ըզհարուածըն կըշռիցէ. այս ինձ ըստոյգ են թըւիք։

Երկրորդ քաղաքացի

Ճըշմարիտըս բարբառի։

Երրորդ քաղաքացի

Ոպիմեայ՝ քաջ են բանք իւր.
Հարուածոյն ուստեք այլ չիք հնար՝ յընտանի լոկ ձեռաց։

Առաջին քաղաքացի

Լուռ կացէք. ունկըն դիցուք։

Ոպիմիոս

Ի սիրելեացն համարի
Հարկ ուրեմն ապիրատին է 'ի խնդիր ելանել։
Այլ ո՞ր ուրուք 'ի գլուխ հանել զվըճաս եղերանն.
Ի ծառայից համօրէն առնոյր պաշտօն կամակար,
Իբր ըզհայր որք զինքն իւրեան ունէր անձնիւր խրախամիտ,
Արեամբ չափ պաշտպանել առնոյր ըզտէր իւր մէն մի.
Եւ ո՛վ որք ապա, ո՞ զինքն ատեայր։

Առաջին քաղաքացի

կին նորին։

Ոպիմիոս

Ցանուանս յայս, կուիրինեանք, զոյն յերեսացդ հատանի,
Շիկնեալ պակուցեալ կայք. և սակայն ո՛ւմ ումեք
Զիցէն յայտ՝ զի 'նդ ամուսին իւր վաղ իսկ կինն այն խեռայր։
Այլ իցէ՞ զի սա ինքնին, թէպէտ յանդուգըն սըրտիւ,
Ժըպրհէր կին և միայնակ՝ հանել զեղեան այն 'ի գլուխ.
Տէր օն անդըր, ցոյց վայր ոչ խիզախէ ոյժ կանացի։
Եւ ո՞ր նըմին բազուկ ուրեմն եհաս 'ի թիկունս.
Գուցէ՞ ումեք 'ի ձէնջ գուշակ 'ի միտս իւր կացեալ՝
Գըտանել զայն, ցուցանել... Այլ համբուն լուռ կայք համայն
Զարհուրեալս ափ 'ի բերան զիտեմ ըզմէն աստանօր.
Լուռ և ես կացից ուրեմն, այլ ինչ չիշխեմ յաւելուլ։

digitised by A.R.A.R.@

Առաջին քաղաքացի

Քաւ, մի՛, խօսեսջիր գողջիր ազատ համարձակ.
Եւ մի՛ զայդ 'ի նախատինըս մեզ դիցես 'ի մըտի՝
Գոգջիր իմն երկիւղ ունել ուրուք առ 'ի մէնջ
Ի բանից ճըշմարտութեան. ըզնոյն համայն մեք կամիմք։

Երկրորդ և Երրորդ քաղաքացի

Այո՛, զնոյն համայն, հապ՝ ճ՛ն զճըշմարտութիւն, զիրաւունս։

Ոպիմիոս

Ասացից. այլ թո՛յլ տո՛ւք ինձ առնել հարցումն ինչ առ ձեզ.
Դատաւորքըդ մէն գործոց քաղաքացեացըս բարուց,
Որպիսի՛ իցեն կարծիք ձեր զգընացիցըն փուլուեայ։

Երկրորդ քաղաքացի

Ապիրատ ոք չարաչուէր։

Երրորդ քաղաքացի

Ըսկիպիոնի ակներեւ.

Եւ ես ինքն տասանօր լըւայ յեռանդըն՝ ես ինքնին,
Զի բանիւք դառնութեան սպառնայր կենաց իսկ նորին։

Առաջին քաղաքացի

Այլ և ես ինքնին ըզդոյն հաւատարիմ քարոզեմ,
Առընթեր գոլով նըմին. և զոր բանիւք վըկայեմ
Ըզնոյն և յերեսս իսկ առ տապըզէն այն վատթար,
Եւ յայտ յանդիման բնաւից՝ գործեմ՝ հաւաստի։

Ոպիմիոս

Լըւարուք արդ. չարժանի քաղաքացիս այս Հռովմայ,
(Զի բանք իմ ըզյայտնեաց յածին), խոհերս այս ախտից՝
Լի քարուականաց մեղօք, տըռփանըս սիրոյ
(Եւ ինձ քաւ 'ի դէպ խընդրել որպիսի՛ սէրն այն իցէ)
Առ խուժդուժն ընծայէ Սկիպիոնի կին մոլեալ.
Այլ դիտակ կամ հաւաստի զի առ չամբուշն ընդ սեամս իւր՝
Արգելս Ըսկիպիոնի ել և մըտից էր եդեալ.
Եւ խեռայր ընդ այս փուլուիոս, մինչ առաջի ձեր համայն
Լու 'ի լու զըսպառնալիս իւր լուտացաւ յատենիս։...
Այլ իցէ՛ւ թէ փուլուիոս լոկ միայնակ ըսպառնայր,
Եւ ոչ ա՛յլ ոք ձայնակից՝ ընդդէմ կենացն ազնըւի։

Առաջին քաղաքացի

Եւ ո՞ այլ ոք, զամենայն ասա. խընդրեմ ընդ բնաւից։

digitised by A.R.A.R.@

Ոսիմիոս

Խընդրիցէք զայն, և յինէն կամիք ըստնոյն ուսանել.
Այլ ոչ լըսելիքդ ինքնին երբեմն լըսան
Ցատենի հրապարակիս յայսմիկ ձայնել կայիոսի՝
«Բրոնաւոր է Սկիպիոն, հարկ 'ի սպանումն է փութալ»։
Արդ անկաւ Ըսկիպիոն, և խրոխտապանծն այն Գրակքեայ
Սոսկալին 'ի կատարումն եհաս պատուէր հրամանի։
Եւ 'ի միտս իմ, կուիրինեանք, մինչ խելամուտ լեալ խորհիմ
Զի օրէնք անյեղլիք փուլուեայ գործոցն և գնացից
Միշտ Գրակքեայ կացին կամք. և զի Գրակքոս և Փուլուիոս՝
Միակ սոսկ համաշունչ հոգի՝ յերկեակ կան մարմնի,
Եւ սեղեխ է մին և միւսն եղբայր կընոջն անարժան՝
Զամուսնոյն Սկիպիոնի. մինչ մրտախոհ լեալ դիտեմ
Զի յանկարծ և թաքնաբար 'ի գիշերի ասա յայսմիկ՝
Ցանփրիկայ հասանէ գարձ արարեալ այսքը Գրակքոս,
Եւ գոգ 'ի պահու անդ խողխողի Սկիպիոն.
Եւ զի սուղ հատից, 'ի գործ մեծ այսքանի կարևոր
Մինչ դիտեալ հայիմ՝ խնամով իմն զանխուլ կալ Գրակքեանց,
Ի դուռոզ և 'ի խորին հատեալ լուսիւն ահաւոր,
Այն զի նախ ամենեցուն՝ մերձաւորի գութ և պարտք
Ըստնոսին էր 'ի խընդիր յուզել դաղտնեաց և վրիժուց.
Զայսոսիկ համայն սոսկմամբ լի՝ մինչ յածեալ 'ի սըրտիս
Մրտայոյզ լինիմ՝ զիարդ չասեմ... Այլ ոհ, զինչ ասել,
Թէ սիրուն, թէ փարելի, թէ պաշտելի է սպանողն։

Երկրորդ քաղաքացի

Լըսա՛ր, Պոստումիէ. և քեզ իսկ ոչ հաւատի
Թուիցին բանք ըստ ելիին։

Առաջին քաղաքացի

Ո՛հ, Ինասապարտ է Գրակքոս.
Զիք տեղի երկուանաց։

Երկրորդ քաղաքացի

Է աներկբայ յանցաւոր,
Եւ արդ զինչ առնել իցէ։

Երրորդ քաղաքացի

Հուրբ զապարանսըն դատել
Ըզփուլուեայ. սրախողխող և զինքն 'ի բոց անդր հոսել։

Երկրորդ քաղաքացի

Իսկ կայիոս։

digitised by A.R.A.R.@

Առաջին քաղաքացի

Լըքանել զնա։

Երկրորդ քաղաքացի

կամիցիս ապա դու

Զի ընկճեալ և կորիցէ եղկելին։

Առաջին քաղաքացի

Է՛, կորիցէ.

Եւ տեսցէ ծերակոյտըն զի արդարըս գործեմք։

Ոպիմիոս (շշնջելով առ մերձակայն)

Տե՛ս, փարիէ, զվըրդովայոյզ չմորեալ զարանցն այն ըզղէմս,
Ազմըկեալ խռովեալ 'ի բանս իմ համայն. ժամ՛ է 'ի դէպ
Ըզվերջնոյն արդ հարկանել բուռն ըզհնարից խորհըրդոյս։

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԴՐՈՒՏՈՍ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

Դրուտոս

Հա՛ս, բըդեաշխըդ, փութացիր. մըղի կըռիւ ահաւոր
Ընդ ամբոխն և զօրականն յԱւենտինեանըն լերին.
Ամենայն ուրեք արիւն և արհաւիրք և սոսկումն։
Խօսեցաւ Գրակքոս, և բանք նորին ճարտարք բոցաշունչ,
Ի հուր կայծակնացայտ վառեալ զոգիս ամբոխին,
Մոլեգնեալ դիմեն յերկաթ և 'ի քարինս և 'ի հուր.
Ցորդեռանդն առ նոսա զայրոյթ՝ ըզզէնս յաճախէ.
Եւ քեզ և ծերակոյտ ժողովյն մահ գոռալով
Ի նախճիրս արեան գաղթեալ խուժեն 'ի զօրսն ուժգնակի։
Զովողք քոյին 'ի գործ վարեն զսուսեր և նիզակ.
Արեան և ըսպանդից գործին 'դ հանուր ճապաղիք։
Եւ վաղ իսկ փուլուխոս խոցեալ՝ զերկիր խածանէ.
Զարտաշուէրն այն՝ առաջին յուզիչ 'ի խռովս ամբոխին,
Առաջլին և 'ի փախուստ փութայր, զանձին փըրկութիւն
Ցաւերակս յակաստանի գործել թափուր բազմնեաց.
Աղընթեր նըմին անդէն և անդրանիկն իւր որդի,
Պատանեակ շնորհալից, լաւագունի հօր արժան.
Անդր հասեալ հաւատարմաց քոյ պատեցին ըզնոսա.
Լայր վատշուէրն այն վասն անձին, փոյթ լինչ զորդւոյն չարա-
Լայր ծնողին 'դ եղկութիւն սակայն ազնիւ պատանին, [րեալ,

digitised by A.R.A.R.@

Եւ զանմեղն իւր պարանոց տալ փոխան հօրն աղերսէր.
Այլ 'ի զուր. երկոքեան ևս առետեղ փողոտին:
Ամբոխին սակայն աճեալ թանձրանայ գունդ խուռնախիտ.
Եւ ոչ ժուժեն տոկալ տեսել կրետեան նետաձիգք՝
Զառաջս հեղեղասաստ բուռն յորձանացն առնուլ կալ.
Որ ոչ յետս ինչ ընկըրկեալ կասի ձայնիւ տրիբունաց,
կամ աղերս պաղատանօք վեհ ալեզարդ ծերունեաց:
Լենտուլոս ինքնին, գիտէք զայրըն՝ վիշխան գերագոյն
Ծերակոյտ աւագանւոյն, պատկառելին հինաւուրց,
Արժանեօք լի, բարեկրօն, յեցեալ յալիս ծերութեան,
Ցառաջ անցեալ 'ի խռան անդ՝ արտասուօք, աղերսիւ,
«Ո՛հ, եղբարք իմ, ձայն արկեալ գոչէր, ո՛ր այն դիւաշունչ
Ոգի կատաղութեան զձեզ յայդքանի վարէ գործ.
Արիւն հռովմէական է զոր հեղուքըդ զարիւն.
Ո՛հ, 'ի սէր աստուածոց և հայրենեաց և իմ՛ իսկ
Որ ձեր եմ՛ գըլխովին, լուարուք, կացջիք, անսացէք »:
Այն ինչ բանքն 'ի բերանի, պողովատիկ գաւաճան
Ըզկուշտսըն մահացու վիրօք խոցեալ պատառէ:
— Ցեսէք զինքն իսկ ահա[1] ձըգեալ ընդ քարշ ոգեսպառ
Թաւթաղուն արեամբ, յեցեալ զըլթասիրայ 'ի բազուկս:

Ոպիմիոս

Ո՛վ տեսիլ, որ ըզգազանս իսկ շարժեսցէ յարտասուս.
Ցեսէ՛ք, հայեցարուք աղէ, քըստմնեալ սարսեսջիք:
Ժողովուրդ դու զաչացու, 'ի լաւութինս ապիկար,
Ցեղերունս ևեթ խիզախ, ահա Գրակքեայդ ձեր հանդէս.
Խողխողեալ Եմիլիանոս, Լենտուլ սպանեալ չարամահ,
Արիւն և կոտորած ընդ Հռովմ՛ ողջոյն ծայր 'ի ծայր,
Եւ հուսկն հասեալ վըտանգ կենաց աւագ որերոյն: —
Եւ զի՞նչ այլ դիմամարտ մոլեգնութեան իւր կայցէ:
Իսկ մեք զի՞նչ, ևհէ, գործեմք մեք. ո՛հ, կայցո՞ւք դեռ մնասցո՞ւք
Զի խոշոշն այն հասեալ՝ առ թերափօքս ընտանի
Ցօշեսցէ զկին և զորդիս, և վերայ նոյին զմեզ:
Հապ՝ օ՛ն զամօթի ընդ վատութիւնդ հարերուք,
Ընդ կոյր մոլորութիւնդ՝ որով պաշտել զինքն առէք:
Ես ահա՝ իշխանութեամբըն զոր ետ ինձ ծերակոյտն
Առ 'ի փոյթ խնամոց հասարակաց փըրկութեան,
Թըշնամի ես հայրենեաց հրապարակեմ՝ ըզԳրակքոս,
Եւ կարգեալ վճռասապարտ նորին ըզգլուխն ընդ վարձուք,

[1]) Ի տեսիլ գայ Լենտուլոս վիրաւորեալ, յեց 'ի բազուկս ծառային, և հատեալ անցանէ զաւսարան Թատերին:

digitised by A.R.A.R.@

Ի նուէր տամ դժոխայնոց սպանդարամետ աստուածոց։ —
Հապ՝ ո՛ն ձեռն եդեալ՝ երդուիցուք, Հարք համօրէն,
Ի վրէժ հրաժարելոյս այս անկենդան։

Ծերակոյտք (զձեռն 'ի վերայ դիականն կարկառեալ)

Երդնումք զայն։

Ոպի Լիոս

Արդ մահն 'ի ձէնջ յուղի անկեալ ընդ դուռնըն կապեան,
փութասջիք հանդուցանել 'ի հայրենին իւր շիրիմս
Ըզդիակնըդ մեծափառ. ընդ ես գայցեն այլք համայն։
Օ՛ն 'ի բաց վարանքդ. առէք 'ի վեր, նուիրակք, ըզտապարդ.
Ի զէն զօրականք. մերկացարուք, ծերակոյտք,
Ըզասուսերըդ թերաքամ ընդ ծիրանեօքդ 'ի պահեստ.
Օ՛ն առէք խրախոյս. ես ինքն ահ՝ ընթանամ առաջի։

Հինգերորդ Հանդէսն յառաջիկայս։ Թարգմ. Հ. Աթանաս Տիրոյեան

ՃԱՇԱԿ

Յ'ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆԷՆ

Ն. ՊՈՒԱԼՈՅԻ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ի զո՛ւր բանահիւս յանդուգն ընդ միտս հարկանիցէ,
Պառնասեան 'ի բարձունս յարուեստ տաղից վերաթեւել.
Թէ զգաղտնին ազդումն 'ի սիրտ իմացաւ ոչ նա զերկնաւոր,
Թէ ոչ աստղըդ ծննդեանն 'ի բնէ քերթող ըզնա կացոյց,
Ըստրուկ յաւէժական է հանճարոյն սակաւապէտ,
փեբոս խուլ առ ձայն նորին, խեռ ըստամբակ է Պիգասոս։
Ծախր 'ի պարապ գեղեցկին ընդ փըշալից ասպարէզ
Ցեռանդըն կեղակարծ ժ որ հարեալ դիմագրաւէք,
Մի՛ տաղից դուք 'ի հիւս ջըրդիք ընդ վայր թափել զոգիսդ,
Մի՛ և զտարփդ 'ի չափածոյս՝ աւիւն հռչուիք քերթողական.
Ահ 'ի ձեզ ունայն փառաց արկցեն հրապոյրք սըտապատիր,
Եւ հարուստ ամօք 'ի փորձ մտիք ուժոյդ և հանճարոյ։
Հոյակապն հանճարեղաց բնութիւն 'ի տուրս յոգնաբեղուն
Առ քերթողըս մէն գիտաց ըզտաղանդոյն բաշխել պարգևս.

digitised by A.R.A.R.@